

Հաստատում եմ՝ 25 նոյեմբերի 2022 թ.
Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի

Գիտական գծով պրոռեկտոր,

փրիլիսոփայական գիտությունների դոկտոր,

Ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածու,

պրոֆեսոր Ավետիսյան Պարզև Սերգեյի



ԿԱՐՇԻՔ ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԳԵՐՈՒԹՅԱՆ

Ռուսական Լևոնի Մուսեյանի «ՀԱԳՈՒՍՏԸ ՈՐՊԵՍ ՆՇԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ ՀԱՅ ԵՎ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԼԵԶՎԱՍՇՇԱԿՈՒՅԹՆԵՐՈՒՄ» Ժ.02.02- «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Միջգիտակարգային ուսումնասիրությունները, որտեղ լեզվական երևույթների համակողմանի վերլուծության նպատակով փոխկապվում են լեզուն, ճանաչողությունն ու մշակույթը, մեծապես կարևորվում են ժամանակակից լեզվաբանության հարացույցում: Գնահատական նշանագիտությունը, միավորելով վերոնշյալ գիտական ուղղությունների տեսամեթոդական գործիքակազմը, օգնում է վերհանել լեզվական նշանի իմաստի զարգացումներն ու փոփոխությունները, որոնք հաճախ կարող են վերակազմավորել աշխարհի հին մոդելը և ձևավորել նորը: Եվ այս ամենը ոչ միայն դառնում է տարատեսակ մեկնությունների առիթ, այլև գիտական ուսումնասիրությունների համար կուռ հենք է ապահովում:

Ներկա ատենախոսության թեման հետաքրքրական է և արդիական՝ ժամանակակից լեզվաբանական ուղղությունների՝ ճանաչողական նշանագիտության և ճանաչողական փոխաբերության համեմատաբար նոր հայեցակարգերի համատեքստում

հագուստի՝ որպես նշանային համակարգի, վերլուծության և նորովի մեկնաբանության առումով:

Ատենախոսության **նպատակն** է որպես նշանային համակարգ ուսումնասիրել **հագուստ** բառիմաստային հարացույցը, **հագուստ**, **հագուստի պարագաներ**, **հագուստի գույն** մատնանշող լեզվական միավորները և այդ բաղադրիչներով կազմված դարձվածային միավորները, վերհանել ու հիմնավորել հայ և բրիտանական ազգային լեզվամտածողության նմանություններն ու տարբերությունները:

Աշխատանքի **գիտական նորույթը** պայմանավորված է այն փաստով, որ իրականացվել է **հագուստ** լեզվական նշանի գուգադրական համապարփակ ուսումնասիրություն՝ լեզվի բառային և դարձվածային մակարդակներում, վերհանվել են դրանց հիմքում ընկած **հագուստ** նշանի ընկալման նմանություններն ու տարբերությունները՝ հայ և բրիտանական լեզվամշակույթներում:

Աշխատանքի **տեսական արժեքը** պայմանավորված է ճանաչողական նշանագիտության վերաբերյալ տեսական դրույթերի ուսումնասիրությամբ և վերլուծական հայեցակարգը մշակելու կարևորությամբ, որը կարող է նպաստել ճանաչողական նշանագիտության, լեզվամշակութաբանության և ճանաչողական լեզվաբանության շրջանակներում գուգադրական նշանագիտական ուսումնասիրությունների մեթոդիկայի հետագա զարգացմանը:

Աշխատանքի **գործնական նշանակությունը** պայմանավորված է այն փաստով, որ ուսումնասիրության արդյունքները կարող են կիրառվել նշանագիտության, լեզվամշակութաբանության, ճանաչողական լեզվաբանության, միջմշակութային հաղորդակցության, անգլերենի և հայերենի գուգադրական իմաստաբանության, հասկացութաբանության դասընթացների, գործնական ձեռնարկների և բառարանների ստեղծման համար, ինչպես նաև ունենալ գործնական կիրառություն՝ կիրառվելով հագուստի նորաձևության ոլորտում:

Ատենախոսությունը ներկայացված է հետևյալ կառուցվածքով՝ ներածություն, չորս գլուխ /իրենց ենթագլուխներով/, եզրակացություն, գրականության ցանկ, երկու հավելված:

Ներածությունում ատենախոսը հիմնավորել է ուսումնասիրության առարկան, թեմայի արդիականությունը, նորությունը, նպատակը, խնդիրները, տեսական ու գործնական նշանակությունը, նախանշվել են պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

Առաջին գլխում ներկայացվել է նշանագիտությունը՝ որպես գիտություն և հետազոտական մեթոդ, ճանաչողական նշանագիտության միջգիտակարգային բնույթը, որոշարկվել են նշանի տարբեր տեսակները, դրանց կառուցվածքը, նշանայնության և նշանակերտման առանձնահատկությունները:

Երկրորդ գլխում հազուստը վերլուծվել է որպես նշան, իսկ ազգային հազուստը, զարդարանքն ու լեզվականացված դաջվածքը՝ որպես խոհրդանշային համակարգեր և ինքնության յուրահատուկ ցուցիչներ:

Երրորդ գլխում քննության է ենթարկվել *հազուստ* բառիմաստային հարացույցը, ուսումնասիրվել և զուգադրվել են հայերեն *հազուստ* և անգլերեն *clothes* հոմանիշային շարքերը, ինչպես նաև *հազուստ* մատնանշող նորաբանությունները հայերենում և անգլերենում:

Չորրորդ գլխում վերլուծվել են հայերեն և անգլերեն *հազուստ*, *հազուստի* և *զարդարանքի պարագաներ*, *գույն* մատնանշող բաղադրիչներով դարձվածային միավորները՝ որպես ՀԱԳՈՒՄՏԸ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ Է սեռանիշ փոխաբերության և նրա տեսականիշ փոխաբերությունների առկայացման միջոցներ:

Եզրակացության մեջ ամփոփվել են աշխատանքի հիմնական արդյունքները, համակարգվել ու ձևակերպվել են կարևորագույն դրույթները:

Դրվատելի է ատենախոսի կողմից կատարված մանրակրկիտ աշխատանքը հազուստի բառայնացման միջոցների, հազուստի տարբեր պարագաներով կազմված դարձվածային միավորների վերլուծության և դրանց հիմքում ընկած ճանաչողական փոխաբերությունների ուսումնասիրության ոլորտում:

Ուշադրության են արժանի աշխատանքում զետեղված աղյուսակներն ու գծապատկերները, որոնք օժանդակում են նյութի ընկալմանը, և օրինակների քանակական վերլուծության դրսևորում են:

Ատենախոսությունը աչքի է ընկնում վերլուծական նյութի ու տեսական եզրահանգումների հագեցածությամբ: Ակնհայտ է, որ ատենախոսը քաջատեղյակ է ուսումնասիրվող նյութին և նրան հաջողվել է պատճառաբանված կերպով գուգադրել **հագուստ** նշանային համակարգը հայ և բրիտանական լեզվամշակույթներում՝ ճանաչողական նշանագիտության և ճանաչողական փոխաբերության համատեքստում:

Բարձր գնահատելով ատենախոսի կատարած աշխատանքը՝ կցանկանայինք ստանալ որոշ հարցերի պարզաբանումներ:

1. Բրիտանական լեզվամշակույթը ենթադրում է Միացյալ Թագավորության մաս կազմող երկրների ազգային առանձնահատկությունների վերհանում: Աշխատանքում նկատվում է որոշակի անհամաձայնություն, անզլիական լեզվամշակութային առանձնահատկությունները գերիշխում են:
2. Հեղինակը առանձնացնում է հագուստի բազմաթիվ գործառույթներ, ճիշտ չէր արդյոք անդրադառնալ նաև ազդեցության գործառույթին:
3. Հեղինակը դիտարկում է բրիտանական հագուստի լեզվամշակութային առանձնահատկությունները ժամանակային մեծ կտրվածքում, մինչդեռ հայկական հագուստի հատկանիշները մեր կարծիքով համաչափ չեն ներկայացված:
4. Հագուստը ունի ըղգծված գենդերային նշույթավորվածություն, չնայած հեղինակը անդրադառնում է սեռանիշային առանձնահատկություններին, բայց նպատակահարմար չէր այդոք տարանջատել երկու սեռերին բնորոշ հատկանիշները, առավելությունը տալով կանացի հագուստին:

Վերը նշված նկատառումները ամեննին չեն նվազեցնում կատարված հետազոտության արժանիքները, որն առանձնանում է տեսական և գործնական նյութի խոր վերլուծությամբ, կուռ և համապարփակ շարադրանքով, հարցադրումների հստակ պարզաբանումներով և գիտական պատշաճ ոճով:

Ատենախոսության սեղմագիրը և ատենախոսի հրատարակած հոդվածները արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթներն ու բովանդակությունը:

Ներկայացված ատենախոսությունը համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացված պահանջներին, ինչն էլ հիմք է տալիս մեզ միջնորդել ԲՊՀ-ում գործող 059 մասնագիտական խորհրդի առջև՝ շնորհելու Ռուզան Լևոնի Մուսեյանին՝ իր հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը:

Գրախոսականը քննարկվել և հաստատվել է Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի լեզվի տեսության և միջմշակութային հաղորդակցության ամբիոնի 2022 թվականի նոյեմբերի 25-ին կայացած N4 նիստում:

Ատենախոսության քննարկմանը ներկա էին Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի լեզվի տեսության և միջմշակութային հաղորդակցության ամբիոնի հետևյալ անդամները՝ բ.գ.դ., պրոֆեսոր Կ. Մատինյանը, մ.գ.դ., պրոֆեսոր Ի. Կարապետյանը, բ.գ.դ., պրոֆեսոր Ա. Միմոնյանը, բ.գ.դ., դոցենտ Մ. Սարինյանը, բ.գ.թ., դոցենտ Ն. Թովմասյանը, բ.գ.թ., դոցենտ Ս. Թումանյանը և ուրիշներ:

Առաջատար կազմակերպություն՝
Ռուս-Հայկական (Սլավոնական)
համալսարանի լեզվի տեսության և
միջմշակութային հաղորդակցության
ամբիոնի վարիչ,
բ.գ.դ., պրոֆեսոր՝



Ա. Ա. Միմոնյան

Հաստատում եմ՝ 25 նոյեմբերի 2022թ.

Գիտքարտուղար, բ.գ.թ.՝

Ռ. Ս. Կասաբաբովա